

բանից նեցուկ առեալ թուլամորթքն, եւ յող-  
 դողքն, եւ անհաստատքն, ելանեն ի հաւատոց.  
 եւ այլք բազումք առնեն անկարգութիւնք ընդ-  
 դէմ կանոնաց եկեղան չարիս, զոր ոչ կարեմք ար-  
 կանել ընդ գրով, ասելով թէ որովհետեւ սուտ է  
 կրօնք քրիստոնէից որպէս եւ նորայն ասեն, արաս-  
 ցուք զինչ հաճեսցին սիրտք մեր որով հայհոյի  
 անունն Աստուծոյ եւ վարդապետութիւնն ի մէջ  
 հեթանոսաց. զայս պտուղ նոցա արդեանցն: Եւ զե  
 յարեւոյնն ասացուք, մեք որ բնակեալ եմք ի  
 մէջ այսպիսի ազգաց, որ ոչ հաւատան զՔրիստոս  
 Աստուած եւ ոչ են պարզեալք քրիստոսի, ոչինչ  
 իւրք զղուեցուցանեն զմեզ կամ տառապեցուցա-  
 նեն, այլ մանաւանդ կան ընդ մեզ խաղաղու-  
 թեամբ եւ սիրով, յաւէտ եւս զե յորով անգամ  
 ընդդիմաբանեմք ընդ նոսա, եւ վիճեմք յաղագս  
 Աստուածութեան քրիստոսի եւ օրինաց նորա, եւ  
 լինիմք ջատագով քրիստոնէութեան կրօնից,  
 ոչինչ ըմբոստանան «ոհեմ» զմեզ, այլ միամտու-  
 թեամբ ակն ածեն զմեօք:

Այլ եւ իւրեւրն սեր որոյ իշխանութեամբն  
 մակաղիմք մեք, տացէ «ոհեմ» Աստուած  
 հաստատութիւն թագաւորութեանն իւրոյ. եւ  
 մեք աղօթս յեօ մատուցանեմք ըստ խրատու մեծին  
 Պօղոսի զի այսպէս հանդարտութեամբ վարիմք  
 զկեանս մեր որպէս եւ ոչ յաւուրս թագաւորաց  
 մերոց մինչ իշխանութիւնն մեր էր, եւ սա այլազգ  
 է եւ ոչ պաշտօնեայ քրիստոնէութեան խորհրդոյս,  
 այսպիսի գթով գթայ եւ նախախնամեալ պահ-  
 պանէ զմեզ թարց զղուանաց: Իսկ առ մեզ եկեալ  
 պատրիքն ոչ այսպէս, այլ ներհակաւ վարին ընդ  
 մեզ, խոչընդակն «ոհեմ», եւ յորժամ ներհակեմք  
 անկարգ արարմանց նոցին՝ զուր եւ ունայն բանիւք  
 ամբաստան լինին առ մեծութիւն ձեր, եւ անփորձ  
 գողով նոցին բանիցն՝ հաւատայք, քանզի ի մէջ  
 այլասեռիցն, զհայք հերձուածող եւ հերետիկոս